# ՀԱՆՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

*մագիստրոսի*
*կրթական*
*ծրագիր*

# ՀԱՆՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

*մագիստրոսի կրթական ծրագիր*

| | |
|---|---|
| **Կրթական մակարդակը** | Մագիստրոսական ծրագիր |
| **Մասնագիտությունը** | Սոցիոլոգիա |
| **Մասնագիտացումը** | Հանրային քաղաքականության հետազոտություններ |
| **Մեկնարկը** | 2023/2024 ուստարի |
| **Ուսուցման ձևը** | Առկա / հեռավար կրթության հնարավորությամբ |
| **Տևողությունը** | 1 տարի |
| **Բեռնվածությունը** | 60 կրեդիտ |
| **Ուսման վարձը** | 650,000 ՀՀ դրամ |
| **Դիմում-հայտի լրացման կարգը** | https://ysu.am/group/23/150 |

## ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Այս ծրագիրն միտված է հանրային կառավարման ոլորտում մեծ պահանջարկ ունեցող մասնագետներ պատրաստելուն՝ զինված արդիական հիմնախնդիր առաջադրելու և հետազոտելու, հանրային գործընթացների և երևույթների գնահատման մոդելներ նախագծելու, հանրային քաղաքականությունները բազմակողմանիորեն վերլուծելու և հետազոտությունների արդյունքներն ընդհանրացնելու ու լայն հասարակայնությանը ներկայացնելու կարողություններով: Համանման մագիստրոսի կրթական ծրագրեր գործում են աշխարհի այնպիսի հեղինակավոր բարձրագույն ուսումնական հաստատություններում, ինչպիսիք են՝ Օքսֆորդի, Չիկագոյի, Գլազգոյի, Չանգ Մայի, Բրիստոլի համալսարանները:

## ՈՎՔԵ՞Ր ԿԱՐՈՂ ԵՆ ԴԻՄԵԼ

1. սոցիոլոգի կրթություն և/կամ որակավորում ունեցող մասնագետները,
2. սոցիոլոգի կրթություն և/կամ որակավորում չունեցող, սակայն սոցիալական հետազոտությունների մեթոդաբանական առարկա(ներ)ից կրեդիտներ ունեցող անհատները,
3. սոցիոլոգի կրթություն և/կամ որակավորում չունեցող, սակայն սոցիալական ոլորտում հետազոտական բաղադրիչով նախագծերին՝ որպես հետազոտող մասնակցած և/կամ հետազոտական հրապարակումներ ունեցող անհատները,
4. հանրային քաղաքականության և կառավարման ոլորտում մասնագիտական փորձ ունեցող անհատները:

Դիմորդները պետք է ներկայացնեն պահանջներին համապատասխանությունը հավաստող փաստաթղթեր: Դիմորդները կանցնեն հարցազրույց, որի ընթացքում կքննարկվի դիմորդի հետազոտական փորձը, հետազոտական հետաքրքրություններն ու ծրագրին դիմելու շարժառիթները:

**Փաստաթղթերն ընդունվելու են ընթացիկ տարվա հուլիսի 3-ից մինչև օգոստոսի 15-ը՝ ժամը 18:00-ն:**

Կառավարության 2020 թվականի հունիսի 18-ի N 1035-Ն որոշմամբ «Սոցիոլոգիա» մասնագիտությամբ մագիստրատուրայում սովորող և միաժամանակ աշխատող ուսանողները ստանում են եկամտային հարկի միջոցով ուսման վարձավճարի փոխհատուցման հնարավորություն:

# ՀԱՆՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

*մագիստրոսի կրթական ծրագիր*

| | |
|---|---|
| **Կրթական մակարդակը** | Մագիստրոսական ծրագիր |
| **Մասնագիտությունը** | Սոցիոլոգիա |
| **Մասնագիտացումը** | Հանրային քաղաքականության հետազոտություններ |
| **Մեկնարկը** | 2023/2024 ուստարի |
| **Ուսուցման ձևը** | Առկա / հեռավար կրթության հնարավորությամբ |
| **Տևողությունը** | 1 տարի |
| **Բեռնվածությունը** | 60 կրեդիտ |
| **Ուսման վարձը** | 650,000 ՀՀ դրամ |
| **Դիմում-հայտի լրացման կարգը** | https://ysu.am/group/23/150 |

## ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՑԱՆԿԸ

- Հետազոտության պլանավորում և մեթոդներ
- Կարիերայի կառավարում
- Նախագծերի կառավարում և գնահատում
- Ձեռնարկատիրություն
- Մասնագիտական դասընթացներ
- Քաղաքականությունների հետազոտությունների մեթոդաբանական հեռանկարներ
- Փորձագիտական գիտելիք և քաղաքականություն (օտար լեզվով դասավանդվող առարկա)
- Բազմաչափ վերլուծություններ
- Մշտադիտարկում և գնահատող հետազոտություններ
- Արդի սոցիալական տեսություններ
- Հանրային քաղաքականությունների վերլուծություններ
- Միգրացիա և հանրային քաղաքականություն
- Գենդեր և հանրային քաղաքականություն

## ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԸ

- Հարություն Վերմիշյան, սոցիոլոգիական գիտությունների թեկնածու, դոցենտ, ԵՊՀ սոցիոլոգիայի տեսության և պատմության ամբիոնի վարիչ
- Արթուր Մկրտիչյան, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ սոցիոլոգիայի ֆակուլտետի դեկան
- Հասմիկ Գևորգյան, փիլիսոփայական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր, ԵՊՀ կիրառական սոցիոլոգիայի լաբորատորիայի գիտաշխատող
- Սոնա Բալասանյան, սոցիոլոգիական գիտությունների թեկնածու, դոցենտ, «Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն – Հայաստան» հիմնադրամի գործադիր տնօրեն
- Ադրինե Բաբլոյան, սոցիոլոգիական գիտությունների թեկնածու, դոցենտ, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ, ՅՈՒՆԻՍԵՖ տվյալների, փաստերի և վերլուծությունների մասնագետ
- Արամ Վարդիկյան, սոցիոլոգիական գիտությունների թեկնածու, ԵՊՀ միգրացիայի ուսումնասիրության կենտրոնի տնօրեն
- Սառա Մելքոնյան, քաղաքական գիտությունների մագիստրոս, ՀՌԿԿ-Հայաստան հիմնադրամի հետազոտությունների և զարգացման պատասխանատու

Մասնագիտական պրակտիկան իրականացնելու համար կնքվել են պայմանագրեր՝ «Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն – Հայաստան» հիմնադրամի (crrc.am) և «Սոցիես» փորձագիտական կենտրոն հետազոտական ընկերության (socies.am) հետ: